<u>Աշխատանքի ծածկագիր 2092</u>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 1-ին, 14-րդ, 16-րդ, 25-րդ, 32-րդ հարցերը:

<u>Քրեական դատավարության բաժին</u>

Հարց 1

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ եթե քրեական գործով հավաքված ապացույցները հիմք են տալիս ենթադրելու, որ նա կատարել է հանցագործություն, ընդ որում, գտնվում է այլ տեղանքում կամ նրա գտնվելու տեղը հայտնի չէ, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ **եթե նա գտնվում է ազատության մեջ և քննիչը**

որոշում է կայացրել նրան կալանավորելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան, քանի որ ձերբակալման նշված հիմքը հստակ ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Հարց 14

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ քննչական բաժնի պետը նման ցուցում տալու լիազորություն չունի, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը գ-ն է, այն է՝ **բողոքարկել դատախազին՝ կասեցնելով դրա կատարումը**, քանի որ անհրաժեշտ է նաև նշել, թե ինչպես պետք է վարվել նշված ցուցումի հետ:

Հարց 16

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմանը:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 25

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, մինչդեռ ճիշտ պատասխանն է ա-ն՝ այն է՝ **հայցը թողնել առանց քննության՝ իրավունք վերապահելով քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով**, քանի որ բ/ տարբերակով նախատեսված հաշտության համաձայնությունը հաստատելու ընթացակարգ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:

Հարց 32

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ ոչ, քանի որ տուժողին առաջինը հարցեր տալու իրավունք ունեն մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտները:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***2092*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 16-րդ և 32-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ